

ՁԻ ՄԵՌՆԻՐ ՍԵՐԸ

Պետրոս Դուրեանի մահուան 100ամեակին

Ի՞նչպէս համոզեմ իմ սիրտս անհաւատ,
Թէ մահէդ հարիւր տարիներ անցան.
Ողբեր մընացին, եւ խօսքեր կ'իսատ,
Եւ սէրըդ քեզի եղաւ գերեզման:

Քեզ ըսկիւտարի սոխակ կոչեցին.
Ո՞ր սիւգին փափուկ դայլայլդ յանձնեցիր.
Երբքամ հաւաքեմ, կապեմ վանկ վանկին
Եւ սիրեմ այնպէս՝ ինչպէս սիրեցիր:

Ի՞նչ այրած սիրտ էր որ դեռ կը մըլտայ.
Ամէն մէկ քերթուած լընակ խռովալի.
Երագներ կապոյտ, մէջը լուսընկայ,
Շատ նըման էին սիրահար կոյսի:

Հարիւր տարի վերջն իրար մօտ եկանք,
Խօսելու, լալու ծածուկ բառերով.
Կը լըսեմ դարձեալ անանց պաղատանք
Անունդ հմայեկ կախել սըրտիս բով:

Ձի մեռներ, գիտեմ, սէրը քերթողին,
Հոգեփոխութիւն է անմահներու.
Երեք տառ, յաճախ, երկինք կը թռչին,
Նոյն կրակն է անմար շատ հին օրերու:

Օր մը կուրծքիդ տակ տրտում բան եղաւ,
Քընար մ'ունէիր, լաքերը փրթան.
Հարիւր տարի է դու միշտ կը գգաս ցաւ.
Ձըկայ վերքիդ դեղ, չըկայ բուժարան:

Տրտունջքդ նիզակ, հիւ չէր երկնի գէմ,
Կանչ էր արիւնքս, հառաչանք վերջին.
Սեւ պահեր էին, սեւ օրեր դժխեմ,
Երբ կ'երազէիր արփին ռսկեղէմ:

Ա՛հ, ինչո՞ւ այդպէս դժբախտ ըլլայիր,
Միշտ խաչ տեսնէիր, աչքերդ փակուէիր.
Մ'օրդ գրկին մէջ տըզու պէս լայիր,
Արձագանգն հասնէր մի՞նչեւ մեր սրտին: